26754

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՈՃԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՑԵՎ ԱԿՏԻՎԻՍՏԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

«Յերկրորդ հնգամյակի փոխառության (յերրորդ տարվա) իրացման մասին՝ բանվոր ծառայողների կոլեկտիվներում

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՊԱԽԴ-Ի ՑԵՎ ՊՎ-Ի ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1935

ՀՍԽՀ-ՈՐ

Պետհրատի Տպարան Սրբ. Ա. Հախվերդյան
Պատվեր 561 Գլավլիտ 131 Տիրաժ 1000

336
Ա-41

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂ ԻՐԱՑՈՒՄԸ

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, մեծ ՍՏԱԼԻՆԻ գլխավորությամբ ԽՍՀՄ-ն հասավ սոցիալիզմի վճռական հաղթանակների։

Հսկայական չափով աճել է մեր յերկրի ինդուստրիալ հզորությունը։ Կոլտնտեսական հասարակարգը հաղթանակից վերջնականապես և անդառնալիորեն։ Անընդհատ լավանում և աշխատավորական լայն մասսաների նյութական կենցաղային դրությունը։ Խորհրդային Միությունը դարձավ հզոր և անհաղթելի յերկիր, վորը պատրաստ է յետ մղել յուրաքանչյուր արտաքին հարձակումը։ Աճում է նաև մեր ֆինանսական հզորությունը։ Ամրանում է խորհրդային ռուբլին, վորն ի սպաս է դրված սոցիալիզմի շինարարությանը։

«Սոցիալիստական ձևը հանդիսանում է անբաժանելի իշխողը և միակ հրամայող ուժն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ»։

Ժողովրդական տնտեսության և քաղաքի և գյուղի աշխատավորության լայն մասսաների բարեկեցության աճը ստեղծում է նոր փոխառության հաջող իրացման համար հզոր բազա։ Նոր փոխառության իրացման համար յեղած

11.09.2013

26.754

չափազանց նպաստավոր պայմանները պարտավորեցնում են բոլոր հասարակական կազմակերպություններին, յուրաքանչյուր ակտիվիստին առանձնապես հստակ և մանրազնին կերպով կազմակերպել և անցկացնել փոխառության կամպանիան:

Խորհուրդների երկրում կան մոտ հինգ հարյուր հազար ռեժիսական վարկին և խնայողական գործին ոժանդակող հանձնաժողովներ յերեք միլիոն ակտիվով: Այդ մասսայական հասարակական կազմակերպության, դերը նոր փոխառության իրացման մեջ առանձնապես մեծ է: 1935 թվի սկզբին ոժանդակող հանձնաժողովները տարան պարտատոմս պահողի և ավանդատվի որվա կամպանիան, ոպասարկելով վոչ միայն առանձակ միլիոնավոր փոխառության պահողներին այլև պատրաստելով իրենց նոր փոխառության իրացման պատասխանատու խնդրին: Նոր փոխառության իրացման հաջողությունը նշանակալից չափով կախված է ոժանդակող հանձնաժողովների սիստեմի նրա բոլոր ողակների և առանձնապես ստորին ոժանդակող հանձնաժողովների հստակ աշխատանքից:

Կազմակերպել փոխառության հաջող իրացումը իր կոլեկտիվում—այդ յուրաքանչյուր գործարանի, ֆաբրիկայի, շախտայի, շինարարության, հիմնարկության հասարակական կազմակերպության մարտական խնդիրն է:

Յուրաքանչյուր հասարակական ակտիվիստի պատվի գործն է ցույց տալ աշխատանքի բոլշևիկյան որինակներ սոցիալիստական շինարարության ֆինանսական բազայի, նոր փոխառության հաջող իրացման համար մղվող պայքարում:

Նոր փոխառության կամպանիայի հաջող անցկացման համար անհրաժեշտ է՝ սահմանված ժամկետին իրացնել փոխառությունը 1935 թվի մայիսի 20-ին հաջող կերպով ավարտել «Ցերկրորդ հնգամյակի փոխառության» (յերրորդ տարվա) լրիվ իրացումը:

Ապահովել քաղաքի և դյուղի բոլոր բանվորների և ծառայողների 100 %-յա ընդգրկումը բաժնեգրության մեջ:

Փոխառության բաժնեգրությունը անցկացնել լայն մասսայական քաղաքական աշխատանքի և լրիվ կամավորության հիման վրա: Ամբողջ աշխատավորությունը պարզաբանել փոխառության նշանակությունը և բացթողման պայմանները:

Աչալուրջ հետևել և հայտնաբերել փոխառության դեմ հակահեղափոխական փսխողներին, դիմակազրկել նրանց և հակահարված տալ:

Կամպանիան լավագույն կերպով անցկացնելու համար ծավալել սոցիալիստական մրցություն, կազմակերպել ուղեությունները Թաշկենտ գյուղին, կոլխոզին:

05 JAN 2010

336-ա
Ա-11

ասոբ
36075

Ապահովել հարվածային ակտիվիստների կազմակերպչական ազդեցությունը, վորոնք պետք է լինեն նախաձեռնողը կամպանիայի ընթացքում:

Կազմակերպել կամպանիայի ընթացքի մասին հաշվառման և հաշվետվության և ինֆորմացիայի ճիշտ դրվածքը:

Ապահովել բաժնեգրության առաջին մուծման ժամանակին և լրիվ մուտքը մայիս ամսվա առաջին կեսի աշխատավարձից և հետագայում հաջորդ մուծումները անցկացնել ըստ ծրագրի:

ԿԱՄՊԱՆԻԱՆ

Ֆաբրիկայի, գործարանի, շինարարության, շախտայի, հիմնարկության յուրաքանչյուր ուժանդակող հանձնաժողովը պետք է կազմի իր կոլեկտիվի համար կամպանիայի անցկացման ոպերատիվ ծրագիր:

Ծրագրում պիտի նախատեսվեն բոլոր անհրաժեշտ միջոցառումները, նրանց կիրառման ժամկետները և կատարողները: Ծրագրում պիտի նախատեսվի թե ինչ և յերբ պիտի անի յուրաքանչյուր ակտիվիստ:

Կամպանիան սկսելուց առաջ ուժանդակող հանձնաժողովը հաշվետվություն է ներկայացնում իր աշխատանքների մասին Ֆարգործկոմին, մասնավորապես «Յերկրորդ հնգամյակի փոխառության» (յերկրորդ տարվա) պարտատոմսերի հանձնման մասին:

Կամպանիայի անցկացման ծրագիրը (զեկուցողների նշանակումը, լոզունգների և պլակատների տեքստը, ակտիվիստների տեղավորումը) ուժանդակող հանձնաժողովը մացնում է կոմսոմոլի և Ֆարգործկոմ ի հաստատություն, նախապես քննարկելով այդ ակտիվի նիստում:

Ծրագրի կատարման վրա ամենորյա հսկողություն պիտի ունենա ուժանդակող հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ հանձնաժողովի վորևե անդամը: Ուժանդակող հանձնաժողովի յուրաքանչյուր նիստին անհրաժեշտ է ստուգել պլանի կատարումը, լսելով ակտիվիստների զեկուցումները:

Ծրագրի պատճենը ուղարկվում է շրջգործկոմին կից շրջանային ուժանդակող հանձնաժողովին:

ՊԱՏՐԱՍՏԵԼ ԱԿՏԻՎԸ

Մինչև բաժանորդագրություն սկսելը կոլեկտիվում ուժանդակող հանձնաժողովը պետք է:

Կապվել այն խնայդրամարկղի հետ, վորին կցված է կոլեկտիվը, ստանալ փոխառության նյութերը (ագիտացիոն և գործառնական), մասնավորապես բաժանորդագրության թերթերը:

Ստուգել և ամրացնել ցեխային լիազորների անձնական կազմը:

Հրավիրել ակտիվին և մանրամասն ին-

ֆորմացիա տալ փոխառության մասին, իրացման մեթոդների, կամպանիայի անցկացման և բաժանորդագրության թերթերի լրացման կարգի մասին:

Անցկացնել կոլեկտիվի հարվածայինների հատուկ ժողով նրանց մասնակցությունը կամպանիայի մեջ ակտիվացնելու համար:

Առանձնացնել ըստ ցեխերի բաժնեգրությունն անցկացնելու համար ակտիվիստներին, հրահանգել նրանց, մատակարարել բաժնեգրության թերթերով և այլ նյութերով, որոնք անհրաժեշտ են կամպանիան ծավալելու համար:

Փակցնել կամպանիայի սկզբին (փոխառության բաց թողնելու մասին դեկրետը հրապարակելու օրը) կոլեկտիվի բոլոր վայրերում պլակատներ, աֆիշաներ և լոզունգներ:

Պայմանավորվել պատի թերթի և բազմատիրաժ թերթի խմբագրությունների հետ բաց թողնելու կամպանիայի սկզբին (դեկրետի հրապարակման օրը) փոխառությանը նվիրված թերթի հատուկ համար:

Ստանալ գրասենյակից (հաշվապահից) աշխատավարձի ֆոնդի և կոլեկտիվի անդամների քանակի մասին տեղեկանք ըստ առանձին ցեխերի և հերթափոխությունների— բաժնեգրության ընթացքի հաշվառման համար:

ՍԿՍԵԼ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻՑ

Փոխառության իրացման կամպանիային պետք է մասնակցի ամբողջ կոլեկտիվը:

Դրա համար՝

Նոր փոխառության բաց թողնման մասին որենքը հրապարակելու օրը պիտի կազմակերպվեն կոլեկտիվի բանվոր-ծառայողների ժողով—նոր փոխառության պայմանները պարզաբանելու համար:

Ժողովները պիտի կազմակերպվեն յուրաքանչյուր ցեխում, յուրաքանչյուր բրիգադում, յուրաքանչյուր հերթափոխությունում:

Ժողովում պիտի դնել հեղինակավոր ընկերոջ զեկույցը՝ փոխառության մասին:

Ցեխային, հերթափոխային, բրիգադային և ընդհանուր ժողովները կատարվում են նախորոք կազմված ծրագրով:

Ժողովները պիտի մանրամասնորեն պատրաստված լինեն: Ժողովից առաջ կոլեկտիվին պիտի տալ լայն ինֆորմացիա հրավիրվելիք ժողովի մասին այնպես, որպեսզի ապահովվի բոլոր հերթափոխությունների, ցեխերի, բրիգադաների բանվորների (ծառայողների) հարյուրտոկոսյա ներկայությունը ժողովին:

Ժողովում պիտի դրված լինի միայն մի հարց—նոր փոխառության, նրա տնտեսական, քաղաքական նշանակության, բաժանորդների տարատեսակների և իրացման պայմանների մասին հարցը:

ՀՍՏԱԿՈՐԵՆ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բաժնեգրությունը—դա կամպանիայի առաջին շրջանն է, որը պիտի անցկացնել հատուկ ուշադրությամբ:

Դրա համար՝

Ընդհանուր ժողովից հետո, ակտիվը ձեռնամուխ է լինում բրիգադաներում, ցեխերում և հերթափոխություններում բաժնեգրությունն անցկացնելուն: Բաժնեգրությունը հետաձգելը վնաս է: Ընդհանուր ժողովի և բաժնեգրությունն սկսելու միջև ընկած ճեղքվածքը կլիջեցնի ամբողջ կամպանիայի հաջողությունը: Դրա հետ միասին, չի կարելի բաժնեգրություն անցկացնել առանց նախնական ժողովի, ուր բանվորներին և ծառայողներին պիտի մանրամասնորեն տեղեկացնել նոր փոխառության կառուցվածքի և նրա ոգուտների մասին:

Բաժնեգրությունն անցկացնելու համար պիտի մոբիլիզացիայի յենթարկել ակտիվի ամբողջ ներկա ուժը, դասավորել նրանց և յուրաքանչյուր ցեխի, հերթափոխության բրիգադայի համար սահմանել բոլոր բանվորներին բաժնեգրության մեջ ընդգրկելու ստուգիչ ժամկետ հաշվի առնելով բացատրական աշխատանքներն անցկացնելու անհրաժեշտությունը:

Անպատակահարմար է մեկ ակտիվիստին հանձնարարել բաժնեգրությունն անցկացնել

մեծ քանակությամբ աշխատողների մեջ—դրանից աշխատանքի վորակը կարող է տուժել:

Բաժնեգրությունն անցկացնող ակտիվիստը պարտավոր է յուրաքանչյուր բաժանորդին բացատրել, վոր փոխառության անպայման շահող կամ տոկոսաբեր մասը և պարտատոմսերի այս կամ այն կուպյուրը ինքը բաժանորդն է ընտրում և գրում բաժնեգրության թերթիկի մեջ:

Բաժնեգրման թերթերը պիտի խնամքով լրացնել: Ջնջումներից և ուղղումներից բաժնեգրման թերթիկի մեջ պիտի խուսափել:

Լրացված բաժնեգրման թերթիկները բաժանորդը վոչ մի դեպքում չպետք է ձգձգի հանձնելու ոժանդակող հանձնաժողովին:

ԱՄՐԱՑՆԵԼ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բաժնեգրության արդյունքները պիտի ձևակերպվեն արագ և հստակորեն:

Լրացված բաժնեգրության թերթիկները հանձնվում են ոժանդակող հանձնաժողովին, վորը կոլեկտիվի անդամների բաժնեգրության մեջ ընդգրկման արդյունքներն ստուգելուց հետո, անմիջապես հանձնում է այդպիսի հաշվարկային ապարատը բաժնեգրությունը հաշվի առնելու և ձևակերպելու, ինչպես և հաշվարկումները կատարելու համար:

Վոչ մի դեպքում չի թույլատրվում ձգձգել բաժնեգրման թերթերը ոժանդակող հանձնաժողովի մոտ:

Կոլեկտիվ բաժնեգրության ձևակերպումը և բաժնեգրության վերաբերյալ ամբողջ դրամական հաշվարկումները խնայդրամարկղի հետ կատարում է ձեռնարկության (հիմնարկության) ադմինիստրացիան։

Խնայդրամարկղին ուղարկվող բաժնեգրության մասին տեղեկանքն ստորագրում է ձեռնարկության (հիմնարկության) ադմինիստրացիան և հաստատում է ոժանդակող հանձնաժողովը։

Ոժանդակող հանձնաժողովը չի կարող իր վրա վերցնել բաժնեգրության և դրամական գումարները հավաքելու վերաբերյալ վարձեր հաշվարկում։

Փոխառության բաժնեգրության առաջին մուծումը պիտի պահել 1935 թվի մայիսի առաջին կիսամյակի աշխատավարձից։

Բաժնեգրությունն անցկացնելուց հետո մինչև առաջին մուծումը կատարելն ոժանդակող հանձնաժողովը ակտիվի հետ միասին սիստեմատիկորեն ստուգում են ընդունված բաժնեգրության ճշտությունը և հետևում են վարպետի հաշվային ապարատն աշխատանքից ազատվող բաժնորդների բաժնեգրության գումարը հանի և ժամանակին հաշվի առնի նոր աշխատանքի ընդունված, արձակուրդից վերադարձված և այլն աշխատակիցների բաժնեգրության գումարը։

Առաջին, կամ հերթական մուծումն ադմինիստրացիայի կողմից ձգձգվելու դեպքում, ոժանդակող հանձնաժողովը և յուրաքանչյուր ակտիվիստ պարտավոր է անմիջապես հայտնել այդ մասին վերադաս ոժանդակող հանձնաժողովին, խնայդրամարկղին, կուսակոմին և ֆաբդործարանեղկոմին։

ՍՈՑՄՐՑՄԱՆ ՄԵԹՈԴՈՎ ՊԱՅՔԱՐԵԼ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Փոխառությունն աշխատանքի սոցիալիստական մեթոդներով տարվող մեծ մասսայական–քաղաքական կամպանիա է։

Ոժանդակող հանձնաժողովը կուսակցության կազմակերպության և ֆաբդործարանեղկոմի ղեկավարությամբ կազմակերպում է ձեռնարկության (հիմնարկության) առանձին ցեխերի միջև փոխառության կամպանիան լավագույն կերպով անցկացնելու սոցմրցում, մտնելով նույնպես սոցմրցման մեջ ուրիշ կոլեկտիվների հետ։

Սոցմրցման հիմնական ցուցանիշները պիտի լինեն։

Կոլեկտիվի անդամների 100 %-յա ընդգրկումը փոխառության մեջ։

Բաժնեգրության մասին լաղունգի կատարումը փոխառության ազիտ–մասսայական և բացատրական աշխատանքների լավագույն կազմակերպումը։

Առաջին գանձումը ժամանակին խնայդրամարկղը մուծելու։

Հետագա գանձումները կանոնավոր կերպով կատարելը և այդպիսիք ժամանակին խնայդրամարկղը հանձնելը:

Ձեռնարկությունը (հիմնարկությունը) նոր ընդունված, ինչպես և արձակուրդից և հիվանդությունից վերադարձած բոլոր աշխատակիցներին փոխառության բաժնեգրության մեջ ընդգրկելը:

Պարտատոմսաթերթերին հստակորեն սպասարկելը (վիճակահանությունների, շահումների և այլն մասին ինֆորմացիաներ տալը և այլն):

Մենատնտեսների մեջ բաժնեգրությունն անցկացնելու գործում յենթաշեֆ գյուղին, կոլտնտեսությանը ակտիվ կերպով ոգնություն ցույց տալը:

Սոցմրցման պայմանագրի կատարման ընթացքի վրա հսկողություն ե սահմանվում, որը հաջորդաբար իրագործվում ե ակտիվից հատկապես այդ նպատակի համար առանձնացված բրիգադային կողմից: Պայմանագրի ստուգման արդյունքները քննարկվում են բրիգադաների ցեխերի ընդհանուր ժողովներում: Սոցմրցման ընթացքը լուսաբանվում ե պատի և բազմատիրաժ թերթերում:

Սոցմրցման արդյունքների հիմնական ցուցանիշների հաշվառումը կատարում ե ոժանդակող հանձնաժողովը: Վարպես կանոն յուրաքանչյուր ոժանդակող հանձնաժողով պիտի

իմանա, որ ամենակարևորը դա «տանք յերեք շաբաթվա աշխատավարձը» յերկրորդ հընդամյակի փոխառության» (յերրորդ տարվա բաժին) լոզունգի կատարումն ե—բանվոր ծառայողներին 100 %-ով փոխառության բաժնեգրության մեջ ընդգրկելու պայմաններում:

ՇԵՖԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԻՆ

Քաղաքային յուրաքանչյուր կոլեկտիվի պարտականությունն ե ոգնել գյուղին:

Գյուղական կազմակերպություններին փոխառության իրացման գործում ոգնություն ցույց տալու համար, քաղաքային կոլեկտիվի յուրաքանչյուր ոժանդակող հանձնաժողովը վերցնում ե այն գյուղի կամ կոլտնտեսության ոժանդակող հանձնաժողովի շեֆությունը; որի վրա շեֆություն ե անում տվյալ հիմնարկությունը—ձեռնարկությունը:

Գյուղական ոժանդակող հանձնաժողովներին ցույց տված շեֆական ոգնությունը պիտի արտահայտվի՝ ուղարկել ակտիվիստներ փոխառության կամպանիան անցկացնելու գործում յենթաշեֆ ոժանդակող հանձնաժողովին ոգնելու համար:

Կազմակերպել ագիտացիոն նյութերի ուղարկումը, ոգնել կազմելու կամպանիայի անցկացման և նրա իրագործման պլանը:

Ապահովել յենթաշեֆ ոժանդակող հանձնաժողովի կենդանի հրահանգումը:

Կամպանիայի ամբողջ ժամանակաընթացքում սահմանվում և տեղեկությունների փոխանակում չեֆոժանդակող հանձնաժողովի և յենթաչեֆ ոժանդակող հանձնաժողովի միջև և հնարավորության սահմաններում կազմակերպում և նրանց հանդիպում:

Առաջավոր ոժանդակող հանձնաժողովները խնայդրամարկղերին ոգնություն են ցույց տալիս:

Պարբերաբար ստուգելու խնայդրամարկղի կամպանիայի վերաբերյալ աշխատանքների պլանի կատարումը:

Ստուգելու փոխառության իրացման հաշվառման և հաշվետվության դրվածքը:

Առանձնացնելով բրիգադա—կայ հստատելու խնայդրամարկղի և վերջինիս կողմից սպասարկվող ձեռնարկությունների միջև:

Առանձնացնելու բրիգադա-կամպանիայի առանձին բնագավառներն ուսումնասիրելու համար, առաջին հերթին անկազմակերպ աշխատավորական ազգաբնակչության մեջ:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԵՏ ՄՆԱՑՈՂՆԵՐԻՆ

Յուրաքանչյուր ստորին ոժանդակող հանձնաժողով, որն հաջողությամբ է վերջացնում բաժնեգրությունն իր ձեռնարկության մեջ, պիտի ցույց տա հասարակական ոգնություն այն 1–2 ձեռնարկություններին, 1–2 բնակոսպմիություններին, ուր բաժնեգրություն

1008
360775

թյունը թույլ է կատարվում: Մեկ ոժանդակող հանձնաժողովի մյուսին ոգնություն ցույց տալու մասին պիտի տեղեկացնել շրջանային ոժանդակող հանձնաժողովին:

ԿԱՄՊԱՆԻԱՆ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՄԲ ՁԻ ՎԵՐՋԱՆՈՒՄ

Յուրաքանչյուր ոժանդակող հանձնաժողով պիտի ունենա իր կոլեկտիվի անդամների 100 %-յա ընդգրկում փոխառության մեջ:

Հենց այդ է, որ վճռում է կամպանիայի հաջողությունը: Ոժանդակող հանձնաժողովը վոչ մի բոպե չպետք է թուլացնի իր ուշադրությունը նոր աշխատանքի ընդունված բանվորներին և ծառայողներին փոխառության բաժնեգրության մեջ ընդգրկելու համար:

Պիտի դարձնել հատուկ ուշադրություն ժամանակավոր բանվորներին փոխառությամբ ընդգրկելու աշխատանքների վրա:

Ոժանդակող հանձնաժողովը պիտի սիստեմատիկորեն, բայց վոչ պակաս, քան հինգ որը մեկ անգամ ստանա ձեռնարկության ադմինիստրացիայից նոր աշխատանքի ընդունված բանվոր ծառայողների մասին տեղեկանք և փոխառության պայմանների և նրա նշանակության մասին պարզաբանման հիման վրա ընդգրկել նոր ընդունվածներին փոխառության բաժնեգրության մեջ:

ՀՍՍՀ ՀԵՂԿԿՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Մ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ ԱՆՎԱՆ

ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Ոժանդակող հանձնաժողովը պարտավոր է կամպանիայի ամբողջ ժամանակաընթացքում, նրա բոլոր ետապներում ստուգել յուրաքանչյուր կոլեկտիվում հաշվառման դրությունը:

Բաժնեգրության մասին հաշվետու տեղեկությունները կազմվում են ադմինիստրացիայի կողմից, բայց անպայման հաստատվում են ոժանդակող հանձնաժողովի կողմից: Այդ տեղեկությունները հանդիսանում են միակ պաշտոնականը: Այդպիսիք խնայդրամարկղը կանոնավոր կերպով ներկայացնելու վրա ոժանդակող հանձնաժողովը պիտի սահմանի ուշադիր հսկողություն:

Կամպանիայի առաջին շրջանում բաժնեգրության ընթացքի և դրության մասին տեղեկություններն ուղարկվում են խնայդրամարկղին հինգ օրը մեկ անգամ, իսկ հետագայում յուրաքանչյուր ամսի 14-ին և նախավերջին օրը մինչև փոխառության բաժնեգրության մասմաս վճարման վերջնական ժամկետը:

Ոժանդակող հանձնաժողովը պարտավոր է յերեք ամիսը մեկ անգամ ստուգել իր կոլեկտիվի անձնական հաշվի դրությունը խնայդրամարկղում (գրանցվո՞ւմ են արդյո՞ք նրա մեջ կոլեկտիվի ադմինիստրացիայի կողմից ներկայացվող բոլոր տեղեկությունները):

Հաշվառման դրության մասին կոլեկտիվում ոժանդակող հանձնաժողովը պարտավոր է պարբերաբար տեղեկացնել շրջանային ոժանդակող հանձնաժողովին:

ՄՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՎՃԱՐԵԼ ԺԱՄԿԵՏԻՆ

Ոժանդակող հանձնաժողովները պարտավոր են սիստեմատիկորեն ստուգել փոխառության հաշվարկումները բաժանորդների հետ ձեռնարկության և հիմնարկության դրասենյակում:

Աշխատավարձը վճարելու ժամկետներին, ոժանդակող հանձնաժողովները պիտի ստուգեն բաժանորդների հետ կատարվող հաշվարկումների ճշտությունը (համապատասխանո՞ւմ է արդյոք պահումները բաժնեգրության դումարին), ժամկետայնությունը և պահված դումարների խնայդրամարկղ փոխանցելու ամբողջությունը, ազդանշանելով փոխառության միջոցները հանձնելու ձգձման մասին շրջանային ոժանդակող հանձնաժողովին և ֆաբրիկաձարտեղկոմին:

Ոժանդակող հանձնաժողովները հատուկ ուշադրություն պիտի դարձնեն այն բանվորների և ծառայողների փոխառության բաժնեգրության հաշվարկումները վերջացնելու վրա, որոնք հեռանում են կոլեկտիվից մինչև բաժնեգրության վճարման ժամկետը վերջանալը և այդ բաժանորդներին մուծված դումարի չափով պարտատոմսեր հանձնելը:

«Ցերկրորդ հնգամյակի փոխառության» համերաշխ բաժնեգրությամբ ցուցաբերենք մեր սոցիալիստական կազմակերպվածությունը, ՆՍՀՄ-ն՝ ամբողջ աշխարհի աշխատավորության հայրենիքը պաշտպանելու բոլշևիկյան պատրաստակամությունը։

Լենինյան կոմյերիմիությունը— խնայողական դրամարկղերի մարտական շեֆն է։ Կոմյերիտականներ և կոմյերիտուհիներ. յուղեք «յերկրորդ հնգամյակի փոխառության» (յերրորդ տարվա բաժնի) առաջամարտիկները և բաժնեգրությունը կազմակերպողները։

Ֆաբրիկաների, գործարանների, խորհտնտեսությունների և կոլտնտեսական դաշտերի հարվածայիններ և հարվածայնուհիներ յեղեք «յերկրորդ հնգամյակի փոխառության» (յերրորդ տարվա բաժնի) բաժնեգրությունը կազմակերպողների առաջավոր շարքերում։

ՀԵՂԻՆԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գ. Ս. ՄԱՍՈՒՆՅԱՆ ԱՆՎԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՊԼԱՆ

«Ցերկրորդ հնգամյակի փոխառության» (յերրորդ տարվա բաժնի) կամպանիան կազմակերպելու և անցկացնելու համար «Մուրճ և Մանգաղ» գործարանի կոլեկտիվում։

Մ-Մ ը/կ	Աշխատանքների անվանումը	Ով և կատարում	Ժամկետ	Ինչպես կատարվեցավ, դրամի գումարը
1.	Կազմել փոխառության իրացման աշխատանքների պլան	Ոժ. Հնձ. Նախ. ընկ.		
2.	Քննարկել պլանը ոժանդ հանձ ակտիվում	Ոժ. հանձ. Նախ. ընկ.		
3.	Ներկայացնել պլանը գործարտեղիմին ի հաստատություն	Ոժ. հանձ. Նախ. ընկ.		
4.	Մատնել խնայդրամարկղից փոխառության վերաբերյալ ագիտացիոն և ոպերատիվ նյութերը	Ոժ. հանձ. քարտուղ. ընկ . . .		
5.	Մուտքել ըստ ցեխերի լիազորների անձնական կազմը . .	Ոժ.անձ. քարտուղ. ընկ		

6.	Հրավիրել ակտիվը փոխառության և լրացման մեթոդի մասին ինֆորմացիա տալու, ինչպես և կամպանիայի կոլեկտիվում անցկացման պլանը քննարկման յենթարկելու համար	Զեկուցում է նախագահը ընկ. . . .	
7.	Հրավիրել ձեռնարկության հարվածայինների խորհրդակցություն, նրանց կազմակերպելու փոխառության բաժնեգրությանը ակտիվ կերպով մասնակցելու համար	Զեկուցում է կուսկոմի ներկայացուցիչ ընկ. . .	
8.	Կոլեկտիվի անդամների հետ խմբակային և անհատական զրույցներ տանելու համար առանձնացնել ակտիվիստներ	Ոժ. հանձ. նախագահ ընկ. . . .	

Նույն կարգով ել պլանի մեջ մտցվում են այն բոլոր ձեռնարկումները, որոնք նշվել են սույն հուշատետրում։ Վոչ մի բան չպետք է աչքաթող անել։ Պլանում մտցվում են նաև այնպիսի մոմենտներ, ինչպիսիք են՝

1. Ո՞վ է ոժանդակող հանձնաժողովից կցվում բաղմատիրաժ կամ պատի թերթերի խմբագրության կոլեգիաներին։

2. Ո՞վ է առանձնացվել խնայդրամարկղի հետ կապ հաստատելու համար։

3. Ո՞ւմ վրա յե դրված պլանի կատարման հսկողությունը և այլն։

ՀՀ Ազգային գրադարան
NL0204385

270

336
Pu-11